Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար էլեկտրոնային կշեռքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 հուլիսի 2022թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մուշեղ Մանուկյանը, անդամներ՝ Գառնիկ Եղոյանը, Հուսիկ Մարտիրոսյանը, Աղվան Այդինյանը, Հակոբ Գալստյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի ուսումնասիրման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/10 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մուշեղ Մանուկյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Պլանավորված գին /ՀՀ դրամ /
1	**«Էդեսսա» ՍՊԸ** (ք. Երևան, Ղ.Փարպեցի 13, բն. 13)	**(ԱԱՀ վճարող)**	**640000**	**800000**
	«ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ (ք երևան Ավան 7փ 2նրբ 29/1 շենք,)	**(ԱԱՀ չվճարող)**	**1000000000**	

Հանձնաժողովը ուսումնասիրելով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Էդեսսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը պարզեց, որ դրանք կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան: Մասնավորապես իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացված է 50 տոկոս մասնակցության չափ ունեցող մեկ շահառուի վերաբերյալ. մնացյալ չափի մասով շահառուների վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

-Ընթացակարգը կասեցնել. «Էդեսսա» ՍՊԸ-ին առաջարկել հրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Մուշեղ Մանուկյան

անդամներ _____ Գառնիկ Եղոյան

_____ Հուսիկ Մարտիրոսյան

_____ Աղվան Այդինյան

_____ Հակոբ Գալստյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան